ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 6

ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

14.02.2020 *Ք. Իջևան*

Մասնակցում էին գիտխորհրդի 24 անդամներից 20-ը.

ՕՐԱԿԱՐԳ

1. ***2019-2020 ուստարվա առաջին քննաշրջանի արդյունքների ամփոփում: /Զեկուցող՝*** Կ. Պողոսյան/
2. ***Հումանիտար գիտությունների ֆակուլտետի ուսումնական խորհրդատուների հաշվետվությունը /Զեկուցողներ՝*** Լ. Թումանյան, Ա. Ազատյան, Վ. Մելիքսեթյան, Շ. Գրիգորյան/
3. ***Ընթացիկ հարցեր:***

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի 1-ին հարցի վերաբերյալ զեկուցող Կ. Պողոսյանը ներկայացրեց քննաշրջանի կազմակերպական աշխատանքների ընթացքի մասին: Նշվեց, որ ձմեռային քննաշրջանի ընթացքը եղել է պատշաճ կազմակերպված և գտնվել է դեկանատի մշտական ուշադրության կենտրոնում: Զեկուցողն ընդգծեց, որ նախորդ տարվա համեմատությամբ իջել է ստուգարքներին և քննություններին ուսանողների պատրաստվածության մակարդակը: Նշված ժամանակահատվածում ֆակուլտետի առաջադիմությունը կազմել է 76,69% (նախորդ ուստարի՝ 87,08%): Դա բացատրվում է նրանով, որ դասախոսները առավել պահանջկոտ են դարձել: 2019-2020 ուստարվա ձմեռային քննաշրջանին մասնակցել է 266 ուսանող: Միայն գերազանց գնահատականներ են ստացել 23 ուսանող, գերազանց և լավ՝ 66, խառը գնահատականներ՝ 113, իսկ միայն բավարար՝ 2 ուսանող: 62 ուսանողներ չեն կարողացել հանձնել քննությունները և դրանք կվերահանձնեն լուծարքային շրջանում: Դրանց մի զգալի մասը անբավարար պատրաստվածության պատճառով չի ներկայացել ստուգարքներին և քննություններին: Մի մասը անբավարար է ստացել ընթացիկ քննությունների արդյունքներով: Մեկ անբավարար է ստացել 40, երկու անբավարար՝ 9, երեք և ավելի անբավարար՝ 14 ուսանող: Զեկուցողը ընդհանուր գծերով ներկայացրեց ակադեմիական պարտքերի պատկերը, որը, ըստ մասնագիտությունների, հետևյալն է.

- Պատմություն՝ 7
- Հայոց լեզու և գրակ.՝ 4
- Օտար լեզու և գրակ.՝ 12
- Անգլերեն լեզու և գրակ.՝ 4
- Ֆրանսերեն լեզու և գրակ.՝ 2
- Ռուսաց լեզու և գրակ.՝ 1
- Տարրական մանկ. և մեթոդիկա՝ 32

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Բ.գ.թ., դոցենտ Վ. Աղաբաբյանը, բ.գ.թ., դոցենտ Վ. Ավագյանը, բ.գ.թ., դոցենտ Լ. Թումանյանը, պ.գ.թ., դոցենտ Ն. Գրիգորյանը, ասիս. Ա. Մարդանյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

2019-2020 ուստարվա առաջին կիսամյակի քննությունների արդյունքները համարել բավարար:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի 2-րդ հարցի վերաբերյալ զեկուցեցին ուսումնական խորհրդատուները:

«Հայոց լեզու և գրականություն» կրթական ծրագրի I կուրսի (9 ուսանող) ուսումնական խորհրդատու Լ. Թումանյանը ներկայացրեց, որ ուսումնական տարվա սկզբին 1-ին կուրսի ուսանողներին են ներկայացվել ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի ընդհանուր կառուցվածքը և ուսումնական գործընթացի կանոնակարգը, ԵՊՀ ԻՄ-ի կայքից, դասատախտակից, գրադարանից օգտվելու կարգը, ուսանողներին տրվել է համապատասխան կանոնակարգ, որտեղ նշվում են նրանց իրավունքներն ու պարտականությունները: Ուսանողները ծանոթացել են ուսումնառության կրեդիտային համակարգի սկզբունքներին, ինչպես նաև բակալվրի կրթական ծրագրով սովորող ուսանողների համար հրատարակված «Կրեդիտային համակարգով ուսումնառության ուղեցույց և դասընթացների տեղեկագրքից» օգտվելու կարգին: Ուսումնառության I կիսամյակի ընթացքում, ըստ համապատասխան ժամանակացույցի, Լ. Թումանյանը հանդիպումներ է ունեցել ՀԳ ֆակուլտետի «Հայոց լեզու և գրականություն« մասնագիտության առաջին կուրսի ուսանողների հետ /հանդիպումներ են լինում նաև ժամանակացույցից դուրս/:

Յուրաքանչյուր կուրսի լսարանում փակցված է եզրափակիչ գնահատմամբ և առանց եզրափակիչ գնահատման դասընթացների առարկայական ցանկը՝ ըստ համապատասխան կրեդիտների:

Կիսամյակի ընթացքում ունեցել են ինչպես տարբեր գրքերի, ֆիլմերի, այնպես էլ ընդհանուր քննարկումներ՝ տարբեր թեմաներով, որոնց ընթացքում ուսանողները մեծ ակտիվություն են ցուցաբերել:

Ուսանողները տեղեկացված են ֆակուլտետում գործող կարգապահական կանոնակարգին, որի համաձայն՝ ամեն ամիս կանոնավոր ամփոփվում են ուսանողների հաճախումները և ձեռնարկվում համապատասխան քայլեր (դիտողություն, գրավոր նկատողություն և այլն): Կուրսն ընդհանուր առմամբ դասերին հաճախել է հիմնականում պարտաճանաչ կերպով: Եղել են ուսանողներ, որոնք ժամանակ առ ժամանակ բացակայել են, բայց այդ բացակայությունները եղել են հիմնավորված: Կուրսը կարգապահ է, փախուստներ չեն եղել:

Կիսամյակի ընթացքում տեղի ունեցավ միջոցառում՝ «Հայ քնարերգության երաժշտական գույները», որին իրենց մասնակցությունն ունեցան նաև առաջին կուրսեցիները:

I կիսամյակի ընթացքում մշտադիտարկման տակ են եղել ուսանողների գիտելիքների ձեռքբերումների գնահատման գործընթացները /գործնական և սեմինար պարապմունքներ, ընթացիկ ստուգումներ և քննություններ/:

Ուսանողների ուշադրությանն է ներկայացվել քննությունների բողոքների քննարկման կարգը:

Ամփոփելով I կիսամյակի քննաշրջանի արդյունքները՝ կարելի է ասել, որ 1-ին կուրսում ունենք 66, 67 % առաջադիմություն. միայն գերազանց գնահատականներ ունեցող ուսանողներ չկան, երեք ուսանող ունի գերազանց և լավ գնահատականներ, խառը գնահատականներ՝ երեք ուսանող, մեկ անբավարար գնահատական ունի երկու ուսանող, իսկ քննությանը չներկայացած՝ մեկ ուսանող/«Հայ ժողովրդի բանահյուսություն» առարկայից/:

Քննություններն անցել են առանց բողոքարկումների, հանգիստ մթնոլորտում, դժգոհություններ չեն եղել:

«Պատմություն» կրթական ծրագրի I կուրսի (9 ուսանող) ուսումնական խորհրդատու Ա. Ազատյանը ներկայացրեց, որ ուսումնական տարվա սկզբին 1-ին

կուրսի ուսանողներին են ներկայացվել ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի ընդհանուր կառուցվածքը և ուսումնական գործընթացի կանոնակարգը, ԵՊՀ ԻՄ-ի կայքից, դասատախտակից, գրադարանից օգտվելու կարգը, ուսանողներին տրվել է համապատասխան կանոնակարգ, որտեղ նշվում են նրանց իրավունքներն ու պարտականությունները: Ուսանողները ծանոթացել են ուսումնառության կրեդիտային համակարգի սկզբունքներին, ինչպես նաև բակալավրի կրթական ծրագրով սովորող ուսանողների համար հրատարակված «Կրեդիտային համակարգով ուսումնառության ուղեցույց և դասընթացների տեղեկագրքից» օգտվելու կարգին: Ուսումնառության I կիսամյակի ընթացքում, ըստ համապատասխան ժամանակացույցի, հանդիպումներ են եղել ՀԳ ֆակուլտետի «Պատմություն» մասնագիտության առաջին կուրսի ուսանողների հետ /հանդիպումներ են լինում նաև ժամանակացույցից դուրս/:

Ուսանողները տեղեկացված են ֆակուլտետում գործող կարգապահական կանոնակարգին, որի համաձայն՝ ամեն ամիս կանոնավոր ամփոփվում են ուսանողների հաճախումները և ձեռնարկվում համապատասխան քայլեր (դիտողություն, գրավոր նկատողություն և այլն):

Ուսանողները ընդհանուր առմամբ դասերին հաճախել են պարտաճանաչ կերպով: Եղել են ուսանողներ, որոնք հազվադեպ բացակայել են, բայց այդ բացակայությունները եղել են հիմնավորված:

Ուսանողներին բացատրվել է ԵՊՀ ԻՄ-ի ուսանողական նպաստների, պետական և ներբուհական կրթաթոշակների հատկացման կարգը և հանձնարավել սահմանված ժամկետում ներկայացնել համապատասխան փաստաթղթեր:

I կիսամյակի ընթացքում մշտադիտարկման տակ են եղել ուսանողների գիտելիքների ձեռքբերումների գնահատման գործընթացները /գործնական և սեմինար պարապմունքներ, միջանկյալ ընթացիկ ստուգումներ և քննություններ/: Ուսանողներին ներկայացվել է քննությունների բողոքների քննարկման կարգը:

Ամփոփելով I կիսամյակի քննաշրջանի արդյունքները՝ արձանագրենք, որ 1-ին կուրսի առաջադիմությունը կազմում է 88,89 %. միայն գերազանց գնահատականներ ունի մեկ ուսանող, չորս ուսանող՝ գերազանց և լավ գնահատականներ, երեք ուսանող՝ լավ և բավարար գնահատականներ, իսկ մեկ ուսանող բանակ

զորակոչվելու պատճառով չի մասնակցել քննություններին, միայն ստուգարքներն է հանձնել:

Քննություններն անցել են առանց բողոքարկումների, հանգիստ մթնոլորտում, դժգոհություններ չեն եղել:

«Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» և «Հոգեբանություն» կրթական ծրագրի I կուրսի (համապատասխանաբար՝ 11 և 5 ուսանող) ուսումնական խորհրդատու Վ. Մելիքսեթյանը ներկայացրեց, որ ըստ համապատասխան ժամանակացույցի՝ պարբերաբար հանդիպումներ են իրականացվել 1-ին կուրսերի ուսանողների հետ:

Լսարաններում փակցվել են եզրափակիչ գնահատմամբ, առանց եզրափակիչ գնահատման, առանց ընթացիկ գնահատման և ստուգարքային դասընթացների առարկայական ցանկերը՝ ըստ համապատասխան կրեդիտների:

Ուսանողներին ներկայացվել են դասընթացների գնահատման կարգերը:

Վերահսկվել է ընթացիկ ստուգումների և ընթացիկ քննությունների անցկացման գործընթացը:

Ուսանողներին տեղեկացվել է ԵՊՀ ԻՄ ուսանողական նպաստների պետական և ներբուհական կրթաթոշակների հատկացման կարգը: Որոշված ժամանակահատվածում հավաքվել են համապատասխան փաստաթղթեր և ներկայացվել ֆակուլտետի մանդատային խորհրդին:

Ուսանողներին տրամադրվել է համապատասխան խորհրդատվություն և օգնություն՝ ուսումնական գործընթացին առնչվող ցանկացած հարցի վերաբերյալ:

Ուսանողներին տրամադրվել են ուսումնական գործընթացներին առնչվող տեղեկատվական նյութեր:

Վերահսկվել են ուսանողների հաճախումներն ու կարգապահությունը:

Յուրաքանչյուր ամիս ամփոփվել են ուսանողների հաճախումները և ձեռնարկվել համապատասխան քայլեր /դիտողություն, գրավոր նկատողություն/:

Հաշվետու ժամանակահատվածում ուսանողները մասնակցել են մասնաճյուղի գիտահասարակական միջոցառումներին:

Ամփոփելով առաջին կիսամյակի քննաշրջանի արդյունքները՝ զեկուցողը ավելացրեց, որ ՏՄՄ I կուրսում միայն գերազանց գնահատական է ստացել 0, միայն գերազանց և լավ գնահատականներ՝ 7 ուսանող, խառը գնահատականներ՝ 3

ուսանող, միայն բավարար՝ 0, անբավարար գնահատականներ ՝ 1 ուսանող: Կուրսի բացարձակ առաջադիմությունը կազմել է 90.91%:

Հոգեբանություն I կուրս՝ միայն գերազանց գնահատական՝ 1, միայն գերազանց և լավ գնահատականներ՝ 1 ուսանող, խառը գնահատականներ՝ 3 ուսանող, միայն բավարար՝ 0, անբավարար գնահատականներ ստացողներ չեն եղել: Կուրսի բացարձակ առաջադիմությունը կազմել է 100 %:

«Անգլերեն լեզու և գրականություն» և «Ֆրանսերեն լեզու և գրականություն» կրթական ծրագրի I կուրսի (համապատասխանաբար՝ 24 և 6 ուսանող) ուսումնական խորհրդատու Շ. Գրիգորյանը ներկայացրեց, որ ուսանողներին ներկայացվել են կրեդիտային համակարգով ուսումնառության սկզբունքները և դասընթացների գնահատման կարգերը:

Ուսանողներին տրամադրվել է համապատասխան խորհրդատվություն և օգնություն՝ ուսումնական գործընթացին առնչվող ցանկացած հարցի վերաբերյալ:

Լսարաններում փակցվել են եզրափակիչ գնահատմամբ, առանց եզրափակիչ գնահատման, առանց ընթացիկ գնահատման և ստուգարքային դասընթացների առարկայական ցանկերը՝ ըստ համապատասխան կրեդիտների:

Ուսանողներին տեղեկացվել է ԵՊՀ ԻՄ ուսանողական նպաստների պետական և ներբուհական կրթաթոշակների հատկացման կարգը: Որոշված ժամանակահատվածում հավաքվել են համապատասխան փաստաթղթեր և ներկայացվել ֆակուլտետի մանդատային խորհրդին:

Ուսանողներին տրամադրվել են ուսումնական գործընթացներին առնչվող տեղեկատվական նյութեր:

Վերահսկվել են ուսանողների հաճախումներն ու կարգապահությունը:

Յուրաքանչյուր ամիս ամփոփվել են ուսանողների հաճախումները և ձեռնարկվել համապատասխան քայլեր /դիտողություն, գրավոր նկատողություն/:

Ուսանողները մասնակցել են մասնաճյուղի գիտահասարակական միջոցառումների, մասնավորապես՝ բանավեճի ակումբին, կազմակերպվել է «Անգլերեն լեզվի դատավարությունը» ինտերակտիվ միջոցառումը:

Վերահսկվել է ընթացիկ ստուգումների և ընթացիկ քննությունների անցկացման գործընթացը:

«Օտար լեզու և գրականություն» I կուրսի I կիսամյակի քննաշրջանի արդյունքներն են՝

Միայն գերազանց	Միայն գեր. և լավ	Խառը գնահ.	Միայն բավ.	Բացարձակ առաջ.
1	14	13	2	83,33%

Երկրորդ կիսամյակի տարեվերջյան քննությունները ընթացքի մեջ լինելու պատճառով ներկայացնենք միայն ընթացիկ քննությունների ընդհանուր պատկերը.

I ընթացիկ քննությունների արդյունքները.

Ֆրանսերեն լեզու-1 առարկայից 14 ուսանող ստացել է 5 միավոր

6 ուսանող՝ 4 միավոր

5 ուսանող՝ 3 միավոր

4 ուսանող՝ 2 միավոր

1 ուսանող՝ 1 միավոր

Անգլերեն լեզու-1 առարկայից 1 ուսանող ստացել է 5 միավոր

8 ուսանող՝ 4 միավոր

11 ուսանող՝ 3 միավոր

8 ուսանող՝ 2 միավոր

2 ուսանող՝ 1 միավոր

II ընթացիկ քննությունների արդյունքները.

Ֆրանսերեն լեզու-1 առարկայից 10 ուսանող ստացել է 5 միավոր

6 ուսանող՝ 4 միավոր

7 ուսանող՝ 3 միավոր

3 ուսանող՝ 2 միավոր

1 ուսանող՝ 1 միավոր

3 ուսանող՝ 0 միավոր

Անգլերեն լեզու-1 առարկայից 2 ուսանող ստացել է 5 միավոր

8 ուսանող՝ 4 միավոր

5 ուսանող՝ 3 միավոր

10 ուսանող՝ 2 միավոր

5 ուսանող՝ 1 միավոր

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Բ.գ.թ., դոցենտ Կ. Պողոսյանը, բ.գ.թ., դոցենտ Վ. Ավագյանը, բ.գ.թ., դոցենտ Վ. Աղաբաբյանը, բ.գ.թ., դոցենտ Ք. Հարությունյանը, պ.գ.թ., դոցենտ Դ. Թինոյանը, ասիս. Ա. Մարդանյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Ուսումնական խորհրդատուների 2019-2020 ուստարվա առաջին կիսամյակում կատարված աշխատանքները համարել բավարար:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ	Կ. Պողոսյան
ՔԱՐՏՈՒՂԱՐ	Վ. Աղաբաբյան